Հաստատում եմ
Տնօրեն՝ Լ.Հարությունյան

Digitally signed by HARUTYUNYAN LILIT 5810860575
Date: 2022.08.30 18:10:17 MSK

Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

ՀՀ Արագածոտնի մարզի Ուշիի միջն դպրոցի 9-րդ դասարան
Դասղեկ Է.Ասատրյան

2022-2023 ուստարի

ԴԱՍՂԵԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ- ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- դասարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում
- Աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում
- սովորողների հանրօգուտ աշխատանքի կազմակերպում
- աշխատանք սովորողների ծնողների հետ
- դասարանի աշակերտների հանգստի և ժամանցի կազմակերպում
- համագործակցություն մանկավարժական աշխատողների հետ
- սովորողների առողջության, ֆիզիկական զարգացման ապահովում
- ծանոթացում սովորողների սոցիալական պայմաններին, ընտանեկան վիճակին
- սովորողների վարքի,հաճախումների վերահսկողություն
- աշխատանք մանկավարժահոգեբանական կարողությունների զարգացման ուղղությա

ıրթական դաստիարակչական աշխատանքների հիմնականուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը). Դասարանը բաղկացած է 12սովորողներից (6տղա, 6 աղջիկ): Ունեն առաջադիմության միջին և ավելի ցածր մակարդակ: Ընկերասեր են, պատրաստակամորեն կատարում են դասղեկի հանձնարարությունները: Շատ սովորողներ ունեն լայն մտահորիզոն եւ բազմազան հետաքրքրություններ: Դասարանում կան ճանաչողական բարձր

հետաքրքրություններով մի խումբ աշակերտներ: Դասարանում կան տղաներ, ովքեր ակտիվորեն զբաղվում են սպորտով: Հաղորդակցման հմտությունները լավ են ձևավորվել: Տղաների անձնական որակները բարությունն ու ընկերասիրությունն է, նրանք կարողանում են եզրակացություններ անել և ուղղել իրենց սխալները :

Երեխաների մեծ մասը ճիշտ են արձագանքում քննադատությանը, գովասանքին:Կարողանում են համագործակցել մանկավարժների հետ : Կան նաև դժվար դաստիարակվող երեխաներ:

Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

ա/ Մեծ ուշադրություն պետք է դարձնել աշակերտների առաջադիմության բարձրացմանը և քննությունների նախապատրաստմանը:

բ/ Դաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս պետք է հաշվի առնվեն տարիքային առանձնահատկությունները:

գ/ Կկազմակերպվեն հայրենասիրական ուղղվածությամբ էքսկուրսիաներ:

դ/ Աշխատանքներ կտարվեն դասարանում միասնականության բարձրացման համար:

Հայեցի դաստիարակություն.

1.1 **Հոգևոր դաստիարակություն.** Կարևորել հայոց եկեղեցու պատմություն առարկան, դասերի ընթացքում տալ ճիշտ գաղափար մեր կրոնի և հավատքի մասին: Հոգևոր դաստիարակությունը շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման համար, մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Քրիստոնեական արժեհամակարգով մեծացած քաղա- քացին լավագույն դերակատարությունը կարող է ունենալ հասարակության և պետության մեջ:

1.2 **Գեղագիտական դաստիարակություն.** Աշակերտների մեջ սերմանել գեղեցիկի հանդեպ սիրո զգացում, գնահատել գեղեցիկի դերը մարդկային փոխհարաբերություններում: Գեղագիտական դաստիարակությունը ուղղված է երեխայի գեղագիտական զգացումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական գնահատականի ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է աշակերտի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը, բացահայտում է նրա ստեղծագործական կարողությունները և խթանում դրանց զարգացումը:

1.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն.** Ազգային արժեհամակարգով երիտասարդ սերնդի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում հայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում: Ե՛վ դասղեկը, և՛ ուսուցիչները, և՛ դպրոցի հոգեբանը, և՛, հատկապես, զինղեկը կարևոր առաքելություն ունեն լինելու աշակերտների, ապագա զինվորների մեջ պարտքի, հայրենասիրության, քաջության և բարոյական արժեքների ջատագովը, արթնացնելու համար հանուն հայրենիքի անգամ անձնազոհության գնալու մղումը: Շատ կարևոր է դպրոցում նպաստել աշակերտների զաղափարական պատրաստությանը: Ակտիվ մասնակցել դպրոցում կազմակերպվող ռազմահայրենասիրական միջոցառումներին: Կազմել պաստառներ ռազմահայրենասիրական ուղղվածությամբ:

1.4 **Ֆիզիկական դաստիարակություն.** Ֆիզիկական դաստիարակությունը անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչ է: Ֆիզիկական դաստիարակության նպատակն է ժամանակին ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները, զարգացնել հետաքրքրություն՝ երեխային մատչելի շարժողական գործունեության զանազան ձևերի նկատմամբ, դաստիարակել անձի բարոյակամային հատկանիշներ: Պետք է հետևել, որպեսզի աշակերտները մասնակցեն սպորտային միջոցառումներին, ֆիզկուլտուրայի դասերին միշտ լինեն սպորտային հագուստով:

1.5 **Աշխատանքային դաստիարակություն.** Աշխատանքը մարդու սոցիալական վարկի կարևորագույն չափանիշն է, նրա նյութական և հոգևոր բարեկեցության աղբյուրը: Անհատի սոցիալականացումն առանց աշխատանքային դաստիարակության թերի կլինի, քանզի սոցիալականացումը նախևառաջ մարդու հարմարումն է սեփական ֆոնկցիաներին: Աշխատանքային դաստիարակությունը պետք է հնարավորություն տա, որ ամեն երեխա գտնի կյանքում իր գործը: Մանկավարժի նպատակն է աշակերտների մոտ դաստիարակել հարգանք ցանկացած աշխատանքի նկատմամբ: Զգալ պատասխանատվություն դպրոցի և նրա շրջապատի, դասարանի նկատմամբ: Պահպանել գույքը, ակտիվ մասնակցել դպրոցին վերաբերվող բոլոր աշխատանքներին:

1.6 **Բնապահպանական դաստիարակություն.** Նպաստել մատաղ սերնդի էկոլոգիական գիտակցության, մտածելակերպի և հայրենի բնության նկատմամբ պատասխանատու ու հոգատար վերաբերմունքի ձևավորմանը, հասարակական կարծիքի ինստիտուտի ձևավորմանը և հասարակության իրազեկվածության բարձրացմանը: Սեր սերմանել դեպի բնությունը, մասնակցել կանաչապատման աշխատանքներին:

1.7 **Դպրոց-ընտանիք կապը.** Ծնողները և ուսուցիչները նույն երեխայի դաստիարակներն են, հետևաբար դաստիարակությունը կլինի է՛լ ավելի արդյունավետ, միայն ու միայն նրանց կողմից իրականացվող գրագետ համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության

ոլոր ընթացի միանգամայն միասնական նպատակներ, ձգտումներ, հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակության խնդիրները և դրանց լուծման ուղիները: Անհրաժեշտ է պարտավորեցնել ծնողներին սիստեմատիկ այցելել դպրոց, հետևել երեխաների առաջադիմության բարձրացմանը, հետևել երեխաների հաճախումներին

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուս. շբթ.	Ուսումնակադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կ. Ժ.	Կատարողներ
	I ԿԻՍԱՄՅԱԿ		
1	Գիտելիքի օր	01.09.2022	դասղեկ
2	Հայաստանի այն վայրերը, որտեղ ես կուզեի լինել	07.09.2022	դասղեկ
3	Հայաստան, ուզում եմ քեզ հայտնել իմ սերը	14.09.2022	դասղեկ
4	Արտագաղթը չարիք է	28.09.2022	դասղեկ
5	Ուսուցիչ, ես շնորհակալ եմ այն բանի համար, որ...	05.10.2022	դասղեկ
6	Ո՞վ է իսկական քաղաքացին	12.10.2022	դասղեկ
7	Մարդ, որին ես կուզեի նմանվել	19.10.2022	դասղեկ
8	Երբ քեզ շրջապատում են սիրելի մարդիկ	02.11.2022	դասղեկ
9	Ծնողներս ինձ համար, ես ծնողներիս	09.11.2022	դասղեկ
10	Ահաբեկությունը, որպես մարդկության չարիք	16.11.2022	դասղեկ
11	Ինչպե՞ս զգուշանալ խաբեությունից	23.11.2022	դասղեկ
12	Ամեն ինչ գիտեմ առողջության մասին	30.11.2022	դասղեկ
13	Վատ սովորություններ, ինչպես պայքարել դրանց դեմ	07.12.2022	դասղեկ
14	Իմ երազանքներն ու նպատակները	14.12.2022	դասղեկ
15	Իմ օրագրի ուրախ և տխուր էջերը	21.12.2022	դասղեկ
	II ԿԻՍԱՄՅԱԿ		
1	Հանդուրժողականություն. Սահմանումը	11.01.2023	դասղեկ
2	Անհանդուրժողականության դրսևորումները	18.01.2023	դասղեկ
3	Ներողամտություն, թե վրեժխնդրություն	25.01.2023	դասղեկ
4	Հանդուրժողականություն և օրենք	01.02.2023	դասղեկ
5	Խաղաղության մշակույթ	08.02.2023	դասղեկ
6	Խաղաղության մշակույթի հաստատումը	15.02.2023	դասղեկ
7	Գեղեցիկը կփրկի աշխարհը	22.02.2023	դասղեկ
8	ՄԱԿ-ը՝ որպես միջազգային խաղաղարար	01.03.2023	դասղեկ
9	ՄԱԿ-ը որպես միջազգային կազմակերպություն	15.03.2023	դասղեկ
10	ԵԱՀԿ կառույցներն ու ինստիտուտները:	22.03.2023	դասղեկ
11	Ազատություն և ազատասիրություն	05.04.2023	դասղեկ
12	Կարողանալ համապատասխանել «ՄԱՐԴ» վեհ կոչմանը	12.04.2023	դասղեկ
13	45 րոպե աշխարհի շուրջ	19.04.2023	դասղեկ
14	Իմ երկրի պատմությունը	26.04.2023	դասղեկ
15	Հերոսական մայիս	03.05.2023	դասղեկ
16	Ես եմ իմ երկրի տերը	10.05.2023	դասղեկ
17	Ինչպե՞ս ապրել կյանքը	17.05.2023	դասղեկ

18	Իմ կարողություններն ու ձեռքբերումները	24.05.2023	դասղեկ
19	Դպրոցական քննություններ	01.06.2023	դասղեկ

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման տեղը	Ծանոթություն
01.09.2022	Գիտելիքի և դպրության օր	Դպրոցի բակ	միջոցառում
20.09.2022	Անկախության օր	համանք	միջոցառում
06.10.2022	Ուսուցչի տոն	դպրոց	ինքնավարություն
07.12.2022	Տարերային աղետներ	դպրոց	իրազեկման դաս
24.12.2022	Ամանորյա տոնահանդես	դպրոց	միջոցառում
27.01.2023	Շնորհավոր տոնդ, հայոց բանակ	համանք	միջոցառում
07.02.2023	Живая классика	դպրոց	ընթերցանության մրցույթ
20.02.2023	Գիրքն իմ բարեկամն է	«Էդիթ Պրինտ» հրատարակչություն	էքսկուրսիա
27.02.2023	Լինենք իրազեկ և պաշտպանված	դպրոց	Ֆիլմաշարի դիտում
01.03.2023	Սպորտային շաբաթ	դպրոց	Ֆուտբոլային հանդիպում
07.03.2023	Մայրության և գեղեցկության տոն	դպրոց	ինքնավարություն
17.04.2023	Սբ. Հարության տոն	Սուրբ Սահակիս եկեղեցի	ուխտագնացություն
24.04.2023	Եղեռնի հիշատակի օր	Սուրբ Գևորգ եկեղեցի	պատարագ
27.04.2023	Հիշում եմ և պահանջում	Ծիծեռնակաբերդ	հարգանքի տուրք
29. 04.2023	Մաքուր դպրոց, մաքուր համանք	համանք	շաբաթօրյակ
05.05.2023	Ռազմահայրենասիրության դաս	դպրոց	դաս վարող հիմնարկ
09.05.2022	Մայիսյան հաղթանակների օր	համանք	հարգանքի տուրք
12.05.2022	Ֆինանսական կրթություն	Հաբիզնեսբանկ ՀՀ Կենտրոնական բանկ	նախագծային աշխատանք
26.05.2022	Վերջին զանգ	դպրոց	միջոցառում

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

Պարբերաբար կազմակերպվել են անհատական զրույցներ խնդրահարույց երեխաների, նրանց ծնողների հետ: Կազմակերպվել են դասավանդող ուսուցիչների
խորհրդատվություններ և դասընկերների օգնություն:
Անհատական զրույցներ ենք ունեցել հետևյալ թեմաներով՝ «Կարողանում եմ արդյոք սիրել», «Պատասխանատվություն: Ինչ է թաքնված այս բառի հետևում», «Իմ իրավունքներն ու պարտականությունները», «Լսելու կարողություն» և այլն:

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՃՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ամսաթիվ	Օրակարգի քննարկվող հարցերը
01.09.2021	1) Ծնողկոմիտեի անդամների ընտրություն 2) Դասագրքերի վարձավճարների հաստատում 3) Կազմակերպչական հարցեր
09.11.2021	1) Սովորողների առաջադիմությունը 2) Ինչպես զարգացնել երեխայի աշխատունակությունը 3) Կարգապահական հարցեր
12.01.2022	1) I կիսամյակի արդյունքների ամփոփում 2) Սովորողների առաջադիմության ներկայացում 3) II կիսամյակում նախատեսված աշխատանքների ներկայացում 4) Էքսկուրսիայի կազմակերպում
25.03.2022	1) Աշակերտը կոլեկտիվում: Լավ և վատ բնավորություն 2) Պատմում են դասավանդող ուսուցիչները 3) Երեխան տանը, դպրոցում և փողոցում 4) Էքսկուրսիայի կազմակերպում
02.05.2022	1) Առաջիկա ավարտական քննությունների աշխատակարգի քննարկում 2) Վերջին զանգի միջոցառման կազմակերպչական հարցեր
26.05.2022	1) Սովորողների առաջադիմ. Ներկայացում 2) Վերջին զանգի միջոցառման կազմակերպչական հարցեր